ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՆՈՐ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության նոր վարչատարածքային բաժանումը (11 մարզերի դրությամբ),

Նկատի ունենալով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հովվական, կրոնական ժողովրդական գործունեության զորացման և գործնական արդյունավորման անհրաժեշտությունը,

Նկատի ունենալով նաև պատմական անցյալի որոշ ավանդույթները,

Հետ խորհրդակցության Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի Հայաստանում ապրող և գործող անդամների հետ,

Այսու Հայրապետական պաշտոնագրով կատարում ենք հետևյալ բարեփոխությունները մեր Եկեղեցու թեմական կառուցվածքային բնագավառում:

Սույն պաշտոնագրով Հայաստանի Հանրապետության տարածքում մեր Եկեղեցու թեմերը կարգավորում ենք ըստ հետևյալին.

1. Արարատյան Հայրապետական Թեմ ներառելով Երևան մայրաքաղաքը և Արարատի մարզը:
- Առաջնորդական փոխանորդ՝ *Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Ներսիսյան*
2. Շիրակի Թեմ՝ ներառելով Շիրակի մարզը:
- Առաջնորդ՝ *Գերշ. Տ. Գրիգորիս Արքեպս. Բունիաթյան*
3. Գուգարաց Թեմ ներառելով Լոռիի և Տավուշի մարզերը:
- Առաջնորդ՝ *Հոգշ. Տ. Սեպուհ Վրդ. Զուլչյան*
4. Սյունյաց Թեմ ներառելով Սյունիքի և Վայոց Ձորի մարզերը:
- Առաջնորդ՝ *Հոգշ. Տ. Աբրահամ Վրդ. Մկրտչյան*
5. Արմավիրի Թեմ ներառելով Արմավիրի մարզը:
- Առաջնորդ՝ *Գերշ. Տ. Ասողիկ Եպս. Արիստակեսյան*
6. Արագածոտնի Թեմ՝ ներառելով Արագածոտնի մարզը:
- Առաջնորդ՝ *Հոգշ. Տ. Նավասարդ Վրդ. Կճոյան*
7. Գեղարքունյաց Թեմ ներառելով Գեղարքունիքի մարզը:
- Առաջնորդ՝ *Գերշ. Տ. Անանիա Եպս. Արաբաջյան*
8. Կոտայքի Թեմ ներառելով Կոտայքի մարզը:
- Առաջնորդ՝ *Հոգշ. Տ. Առաքել Վրդ. Քարամյան*

Հրահանգել ենք բոլոր նոր նշանակյալ թեմական Առաջնորդներին, որ շրջագայեն իրենց համար նշանակված թեմական ծառայության շրջանները և ուսումնասիրեն այժմյան կացությունը կրոնական-եկեղեցական-հոգևոր մարզե-

ղում, վիճակագրական տվյալները ձեռք բերեն առարկայական ստուգումներով. նշանակեն առժամյա թեմական խորհուրդներ իրենց թեմի ընդհանուր գործերի ղեկավարման համար. կազմեն եկեղեցական ծուխեր և զբաղվեն իրենց թեմերի կրոնական կյանքի զարգացման ծրագրերով:

Սպասում ենք մեր հայրենի կառավարությունից և մարզերի պետերից և քաղաքային իշխանություններից հարկ եղած աջակցությունը ընձեռել բոլոր Թեմերի Առաջնորդների եկեղեցական գործունեությունների բարվոք ընթացման համար:

Հորդորում ենք մեր սիրելի ժողովրդի զավակներին, որ բոլոր Թեմերում կրոնական վերարթնության առողջ գիտակցությամբ ընդառաջ գնան Թեմական Առաջնորդների հովվական, կազմակերպական, քարոզչական աշխատանքներին՝ բոլորին հիշեցնելով մեր Ս. Եկեղեցու խորախորհուրդ շարականի բառերը՝

«Եկայք շինեսցուք սուրբ զխորանն յուսոյ
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս
ի Հայաստան աշխարհի»:

Հայաստանի Հանրապետության այս հառաջագնաց կյանքում թող մեր ազգային Եկեղեցու հարազատ ավանդույթները, քրիստոնեական հավատքի որպես ճշմարիտ արտահայտություն, վերակենդանանան մեր ժողովրդի առօրյա հասարակական կյանքում:

Այս նախանձախնդրությամբ՝ ողջունում ենք բոլորիդ և սպասում, որ հոգևոր վերազարթոնքի շարժումը վերստին տարածվի մեր մայր հայրենիքում և համայն հայ ժողովրդի կյանքում:

«Ողջ լերուք ի Տէր զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն և յաւետ օրհնեալ ի Մէնջ»:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

30 Մայիս, 1996
Ս. Էջմիածին